## «ԸՆՏԱՆԵԿԱՆ» ԿԵԱՆՔ

Մարդկութեան նախամօրը ծնած առաջին զաւակները մի անհամեմատ ազդեցութիւն ունեցան, իրենց ծնողաց վրայ—նոքա զարգացան մարդկային ձեռքերով: Այն ամեն յառաջադիմութիւնները, զորս ծնողք պարտաւոր էին ընել, և այն եւս շատ յամր կերպով, իրենց զաւակաց պատճառաւ՝ շատ պարզաբերեցին. վասն զի նոքա անհամբերութեամբ հասակէն առ կաւ առաւել սկսան հաղորդել նոյն յառաջադիմութիւնները ուրախութեամբ և հայրական ու մայրական գորովալից խնամքով: Երբեմն կնոջմէն ծնած առաջին զաւակը գործունէութեան անհնարաւոր միջոց մը դարձաւ, որով և մարդկային ազգը իւր մտքի մշակութիւնը և կրթութիւնը առաջնու և զոր բեղմնաւորելու համար՝ պարտաւոր է իւր գաղափարները աւանդել յաջորդ սերունդին, ինչպէս հայրերը կ'աւանդեն իրենց որդիներուն:

Ընտանեկան վկայութիւնք—Սուրբ Գիրքը—առաջին զաւակաց հնգետասանամեայ կենաց շրջանին վրայ լռութեամբ կ'անցնի, և սակայն այս շրջանը ամենահարկաւոր է մարդկային պատմութեան նկատմամբ, և Մովսէսեան Աստուածաշունչ յիշատակարանը ընդհատումն ալ Նախախնամութեան մեզ շնորհած քանականութիւնը մենք պէտք է լեցնենք:

Տղու մը ծնունդը, մանուկը և դաստիարակութեան պահանջած խնամքը, մարդուս գիտութեան փորձառութեան և պարտաւորութեան վրայ աւելցուց վեհ՝ արգասաւորութիւն մը, զոր պէտք է մեզ մտադրութեամբ նշանակել:

Կարծիք չկայ որ մարդկութեան նախամայրը իւր՝ մայրական անձնուրացութեան մեծ պարտքը իւր զաւակին ծնելով գտաւ զգաց, և ինչպէս հաւանական է, հայրը սորվեցաւ անոր ծնած երեկ օրեւ որ զգուշութիւնները: Մէրը զաւակին վրայ ունեցած խնամքը իւր միտքը ձգեց այնպիսի յարմար հնարաւոր միջոցներ, որոնք մինչեւ այն ժամանակ անծանօթ էին իրեն: Այն խնամքները ի գործ դնելու համար՝ հարկ եղած առարկաներուն թիւը շատացաւ և մայրական սէրն ալ հնարագէտ ըլլալու ճարտարութիւնը ունեցաւ:

Մարդը և կինը մինչեւ այն վայրկենին միայն ընկերական յարաբերութեան սէրը կը ճանաչէին. որովհետեւ նոքա երկուքը իրարմէ զատ ուրիշի մը վրայ հոգ չունէին. բայց երբ այն առարկան ունեցան, կամ թէ, ըսեմ, երբ այն զաւակը ունեցան, այն ատեն մի նոր տեսակ բարոյական սէր եւս ճանաչեցին, այն է Սէր հայրական և մայրական: Այս նոր սիրոյ զգացումը առաջինէն նախապատիւ է և մարդուս անուշաւ է նա զգայունին. մինչդեռ առաջինը լոկ հաճութեան և ընկերութեան փոխեփոխ սիրոյ վրայ հիմնուած էր:

Երբեմն այս նոր փորձառութեամբ բարձրացան ծնողները բարոյականութեան ամենաբարձր աստիճանի մը վրայ և հոն այնուացան. Այս ծնողաց այս սէրը, որով հայր և մայր ամենայն քաղցրութեամբ միացան իրենց զաւակաց խնամոց համար, մի նշանաւոր փոփոխութիւն եւս պատճառեց այն յարաբերութեանց մէջ, զոր որ էին մինչեւ այն ատեն. խնամքը, ուրախութիւնը և այն քնքուշ առարկայն, որոյ համար ծնողք ի միասին կը խորհէին, միացուց զանոնք նոր և աւելի քաղցր կապով:

Այս պատճառաւ՝ այր և կին իրա-րու վրայ բարոյապէս գեղեցիկ գիծ մը նշմարեցին և իրարու հետ ազնիւ և աւելի քաղցր հաղորդակցութիւն մը ունեցան։ Այրը սկսաւ սիրել կինը, ոչ միայն իբր կին, այլ իբր մայր իւր սիրելի որդւոյն. կինը սկսաւ պատուել և սիրել այրը ոչ միայն որ-պէս այր, այլ իբր սնուցիչ իւր տղուն։ Նոյն սոսկ զգայական սէրը, զոր յա-ռաջ մէկը միւսի համար ունէր, պա-տուոյ փոխուեցաւ. ուրիշ կերպով ը-սենք, այն արտաքին և ֆիզական սոսկ և եսական սէրէն՝ Ընտանեկան սիրոյ գեղե-ցիկ երեւոյթը յառաջ եկաւ։

— Այս բարոյական փորձերը աճեցան ուրիշ տեսակ փորձերով։ Տղայք մե-ծցան և նոցա սրտերու մէջ սկսաւ սակաւ առ սակաւ հիւսուել քըն-քուշ կապ մը, որով և սկսան նոքա բնականօրէն մէկ զմէկ փնտռել. որով հետեւ ամէն արարած իր նմանը կը սիրէ և կը նախապատուէ։ Այս նուրբ և անզգալի կապէն ալ՝ Ընկերական սէրը ծնուցաւ, որ նոր ծնողքներուն առա-ջին փորձ մը եղաւ. քանզի նոքա ի-րենց մէջ զատ ընկերականութեան և մարդասիրութեան նոր պատկեր մի ալ տեսան. իրենց մաքուր և իսկական զգացումը և անոր կենդանի ցոլացու-մը նշմարեցին իրենց դեռահաս զա-ւակներուն սրտին մէջ, ինչպէս հայե-լիի մէջ. Մինչեւ այս ատեն, քանի որ իրենք առանձին էին, անցեալն և ներկային մէջ միայն կ'ապրէին. իսկ հիմայ հեռաւոր ապագայի մէջն ալ սկսան զգալ իրենց ապրելու ուրա-խութիւնը։ Նոքա տեսան որ զաւակ-նին չափաւորապէս կը զարգանան ի-րենց մօտ. նշմարեցին որ այն զաւակ-ներուն մէջ, իւրաքանչիւր օր, մէկ մէկ կարողութիւն և ընդունակութի կը փայլի, որոնք ապագայի հեռաւոր-սիլ և ծիծաղադէմ պատկերը կը ներ-կայացնէին իրենց աչքերու առջեւ, պատկեր մը, որ ժամանակին իրենց նը-ման մարդիկներ պիտի դառնային այս զաւակները, պատկեր մը որ իրենց սրտերուն մէջ Յուսոյ նոր զգացումը ար-ծարծեց։

Բայց ի՜նչ անվերջ իշխանութիւն կը բանայ արդեօք Յոյսը մարդկութե առջեւ։

Որքան այն ծնողքները կը վայե-լէին իւրաքանչիւր զուարճութիւն միանգամ, մէկ անգամ և այն ալ ներ-կային մէջ. բայց այժմ Յոյսը ամէն ա-ռաջին անգամ վայելած զուարճու-թիւնները կրկնապատկելով և անոնց վրայ հազար անգամ քաղցրութիւն աւելցնելով՝ ապագայի մէջ ալ վայե-լելու բերկրութիւնը պատճառեց ծը-նողաց. Եւ երբ այն զաւակները ե-րիտասարդութեան բուն հասակը հա-սան, ի՜նչ զգալի զանազանութիւն կամ փոփոխութիւն մտաւ մարդկայ-ին այն առաջին ընկերութեան մէջ։ Իւրաքանչիւր գաղափարներ զորս ծը-նողքները կը հաղորդէին իրենց զաւակ-ներուն, անոնց իւրաքանչիւրին միտքի մէջ սկսան զանազան կերպ տպաւոր-ուիլ, և ծնողք այս նորաձեւութեամ-բը կը յափշտակուէին և կը զարմանա-յին։ Այն ատեն կենդանացաւ մտած-ման շրջահայեցութիւնը, զարգացաւ բարոյական զգացումը կրթութեամբ. Ճոխացաւ լեզուն և սկսաւ նկարուիլ աւելի ճշգրիտ և վայելուչ ձեւով, ո-րով և յայտնուեցան զգացումները աւելի նուրբ դարձուածներով։ Սկը-սան նաեւ ծնողք իրենց շուրջը, բը-նութեան մէջ, նոր փորձեր ընել և ի-րենց արդէն ծանօթ եղած փորձերը ի գործ դնել իրենց զաւակաց պատ-ճառաւ։

Այնուհետեւ նոյն ինքն զաւակը

կամ լաւ եւս է ըսել մարդն էր, որ բոլորովին կը գրաւէր Նոցա մտադրութիւնը և գործունէութիւնը։ Այնուհետեւ այլ երկիւղ չը կար, որ մարդը իր բարձրութենէն իջնէր և բոլորովին անասուններուն նմանէր։

Թարգ. ի Գաղղ. Ա. Տարեան, Հ.
Գարանֆիլեան. Ազ. Կեան. ռուսա-ճառական։

## ԻՂՁ ՍՐՏԻ ԱՌ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ով դու տաճար երկնահանգէտ՝ 'ի քեզ Փրկչին կայ դամբան.
դու աշխարհի քանի՜ չքնաղ սփռես շնորհս անպայման
խնամես որոց առ քեզ դիմեն ուխտ 'ի բերան սիրտ 'ի Թունդ
հասեն արտօսր, բղխեն Թառաչ, ժտեն անձկով քաղցրիկ գութ։
Քանի՜ պայծառ քան զԱրփենւոյն անբաւ աստեղց բոյլք խմբին
և շողշողին լուսոյն ղամբարք 'ի նորակերտ գմբեԹին.
բա՜ գանգիւն տան քնարք սրտից հաւատաւոր մաղԹողաց.
որք ըստ սրտին անբծուԹեան զհայցուածն առնուն անկասկած։
Ընդ և բուրեան յաւերժ ծխի և բարդ 'ի բարդ դիզանայ
կապուտագեղ 'ի վեր յերկինս ընդ մաղԹանացն բարձրանայ.
որպէս յորժամ հարաւ շնչեալ յարեւմտից ժայԹքէ ամբ
կոյտ չեղջակոյտ կոհակացեալ 'նդ. եԹեր սփռի աստղազարդ։
Թէ զաչս 'ի վեր ոք յառեսցէ 'ի նկատել զկերտուած
անդէն տեսցէ մեծ հիացմամբ ոսկի յեռեալ գեղապանծ
իսկ յարտաքուստ ծայր գմբեԹին խաչն ոսկեկուռ բարձրանայ
ճաճանչ հատեալ ճառագայԹից վեր քան զԱրփին ցոլանայ.
Քան տաճարին տեսիլն յաւէտ իղձ առ Յիսուս անդ վեղու
է վայրն համբուն ոգեպարար Քրիստոսի ծածկի կենսատու
ընդ Սուրբ Հիմաւ եղեալ երբեմն Սարգին անեղծ Անմահին
այսօր զնոյն տեսցէ հոգի փառեալն 'ի սէր Յիսուսին.
Եւ Գողգոթայն սարսափելի Ահաւորին Զենարան
բլուր լալեաց, բլուր կոծոյ, այլ և սեղան քաւուԹեան.
ուրանօր իմ սպաս հարեալ ամ մի և կէս սերտ սիրով
վայելեմ յարդ զփառս Նորին, ում շատք տենչան կարօտով.
Եղէ՞ արդեօք Տէր. յետ յառնեսցս գտայց շնորհս առ 'ի Քէն
ակն յանդիման դիտել զՔեզ և վայելել փառս անդէն.
ուր յանգեսցին տարփանք հոգւոյս եղէց անիղձ յաւիտեան
զերջանկուԹիւնն յաւերժ անեղծ վայելեցից անսահման
Զայս 'ի Քէն Տէր, միայն խնդրեմ, Քեզ Անեղին պաղատիմ
Ո՜ զիս զրկեր 'ի Քոց շնորհաց, ասր զիս առ Քեզ Աստուած իմ։

Կ. Գ. Զ. Զմիւռնացի Զ—եան։